



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մարտի 2008թ. N 59


ք.Հրազդան

ՀԱՇՎԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի N 747-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 98-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- 1.Հաստատել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Կոտայքի մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն 1 հավելվածի:
- 2.Աշխատակազմի քարտուղարության իրավաբանական բաժնին՝ հանձնաժողովի գործունեության օրինակելի կարգի նախագծի համաձայն պատրաստել «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով Կոտայքի մարզային հանձնաժողովի գործունեության կարգը» և մինչև 2008թ. ապրիլի 1-ը ներկայացնել «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով Հայաստանի Հանրապետության ազգային հանձնաժողովի» հաստատմանը:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Կ. ՇԱՀԳՆԱՆՅԱՆ



Հավելված



ՀՀ Կոտայքի մարզպետի

2008թ. հունիսի 31-ի

N 59 որոշման

**ՀԱՇՎԱՆՈՒՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

1.4.Շահագալոյան – ՀՀ Կոտայքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ

2.4.Հունանյան – ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության, սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

3.Լ.Նահապետյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

4.Հ.Կոստանյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

5.Վ.Թադևոսյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

6.Ս.Հակոբյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համակարգման վարչության պետ

7.Ա.Հարությունյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության իրավաբանական բաժնի պետ

8.Ա.Պետրոսյան - ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

9.Զ.Բուբուշյան - «Մարդկային հասարակության կայուն զարգացման ասոցիացիա» Հ/Կ Հրազդանի բաժանմունքի նախագահ

10.Ս.Բաբախանյան - «Քաղաքացիական ակադեմիա» կենտրոն Հ/Կ նախագահի տեղակալ

11.Գ.Գաբրիելյան - «Առողջ հասարակություն» Հ/Կ նախագահ